- մարտական պայմաններում տեխնիկան թաքցնել և քողարկել.

- ավտոմեքենայի շահագործման, նորոգման և տարատեղման ժամանակ պահպանել անվտանգության կանոնները.

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Առնվազն միջնակարգ կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր

համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

### **3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Հաշվետվությունների մշակում
2. Բարելարքություն

### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Ժամանակի կառավարում
3. Կոնֆլիկտների (սթրեսի) կառավարում
4. Ծառայությունների մատուցում և կառավարում (քաղաքացիների սպասարկում)

## **4. Կազմակերպման շրջանակը**

### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Օժանդակում է իր կառուցվածքային ստորաբաժանման ավելի ցածր պաշտոն զբաղեցնող փրկարար ծառայողների աշխատանքներին:

### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Պաշտոնի անձնագրով նախատեսված լինելու դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կայացմանը:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

1) իր կառուցվածքային ստորաբաժանման ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում.

3) տվյալ մարմնից դուրս շփվում է իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ.

4) տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի.

### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

1) իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների վերլուծմանը և գնահատմանը.

2) բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի

## **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության սերժանտի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՎԵՂՈՒ ՀՐՇԵՋ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻ ՎԱՐՈՐԴ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) Վեդու հրշեջ փրկարարական ջոկատի (այսուհետ՝ Ջոկատ) վարորդ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.11-Կ-109)։

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Ջոկատի վարորդը անմիջականորեն ենթակա և հաշվետու է հերթափոխի պետին։

##### **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները**

Ջոկատի վարորդը անմիջականորեն ենթակա ծառայողներ չունի։

##### **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Ջոկատի վարորդի բացակայության դեպքում նրան փոխարինում է Ջոկատի ավագ վարորդը։

##### **1.5. Աշխատավայրը՝**

Հայաստան, Արարատի մարզ, ք.Վեդի Արցախի 7։

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**

##### **Գործառույթները՝**

1. Վարորդը կրում է անձնական պատասխանատվություն իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև ջոկատի (խմբի) առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար։

2. Վարորդին, որն իր հետ չունի վարորդական վկայական և իրեն ամրացված ավտոմեքենան վարելու իրավունքի վկայական, հերթապահության չի թույլատրվում։

3. Վարորդին արգելվում է տրանսպորտային միջոցի ղեկը փոխանցել այլ անձանց, այդ թվում՝ նրանց, որոնց ինքը ենթարկվում է։

4. Վարորդի ըստ ստորաբաժանման մասնագիտական ուղղվածության գործառույթային պարտականությունները հաստատվում են «Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։

##### **Իրավունքները՝**

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը։

- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը։

- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը։

- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը։

- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը։

- իրավական պաշտպանությունը։

- առողջության պահպանումը։

- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը։

- նշանակման արդյունքները բողոքարկելը։

- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը։

- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը։

##### **Պարտականությունները՝**

- գիտենալ իրեն ամրացված տեխնիկայի տակտիկատեխնիկական բնութագիրը, նշանակությունը, կառուցվածքը, աշխատանքի սկզբունքը, տեխնիկական սպասարկումը, անսարքությունները (նշանները, պատճառները, վտանգավոր հետևանքները, ինչպես նաև հրշեջ-փրկարարական ջոկատի մեկնման տարածքը, ջրաղբյուրները, ճանապարհները և երթանցները։

- պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները և կարողանալ վարել ջոկում գոյություն ունեցող բոլոր տեսակի ավտոմեքենաները տարբեր ճանապարհային և օդերևութաբանական պայմաններում՝ համաձայն վարորդական վկայականում արված նշումների.

- կարողանալ շահագործել իրեն կցված ավտոմեքենայի հատուկ սարքավորումներն ու մեխանիզմները, ինչպես նաև ռադիոկայանը, ամբողջ ծավալով օգտագործել դրանց տեխնիկական և տակտիկական հնարավորությունները հրդեհի վայրում՝ փրկարարական գործողություններ կատարելիս.

- պահպանել անվտանգության տեխնիկայի կանոններն ու արտադրական սանիտարիայի կանոնները՝ ծառայության, ավտոմեքենաների շահագործման, տեխնիկական սպասարկման և վերանորոգման ժամանակ.

- ստուգել ամրակցված ավտոմեքենայի տեխնիկական վիճակը, կատարել դրա որակով, ժամանակին և ամբողջ ծավալով տեխնիկական սպասարկումները.

- խնայողաբար օգտագործել վառելիքաքսուքային նյութերը և օգտագործվող մյուս նյութերը, կատարել դրանց օգտագործման ու պահպանման կանոնները.

- պահպանել ավտոկայանատեղի սարքավորումների օգտագործման կանոնները, ճիշտ լրացնել հրշեջ ավտոմեքենաների շահագործման տեխնիկական փաստաթղթերը.

- զեկուցել ջոկի հրամանատարին ամրացված տեխնիկայի բոլոր անսարքությունների մասին և անմիջապես միջոցներ ձեռնարկել դրանց վերացման համար.

- մարտական պայմաններում տեխնիկան թաքցնել և քողարկել.

- ավտոմեքենայի շահագործման, նորոգման և տարատեղման ժամանակ պահպանել անվտանգության կանոնները.

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Առնվազն միջնակարգ կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

#### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության կրտսեր խմբերի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող (բացառությամբ քաղաքացիական պաշտպանության ստորաբաժանումներում ծառայության ընդունվողների) այն քաղաքացիները, ովքեր

համապատասխան նախարարության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են առնվազն եռամսյա ուսումնական փորձաշրջան:

### **3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Հաշվետվությունների մշակում
2. Բարեվարքություն

### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Կառավարում արտակարգ իրավիճակներում
2. Ժամանակի կառավարում
3. Կոնֆլիկտների (սթրեսի) կառավարում
4. Ծառայությունների մատուցում և կառավարում (քաղաքացիների սպասարկում)

## **4. Կազմակերպման շրջանակը**

### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Օժանդակում է իր կառուցվածքային ստորաբաժանման ավելի ցածր պաշտոն զբաղեցնող փրկարար ծառայողների աշխատանքներին:

### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Պաշտոնի անձնագրով նախատեսված լինելու դեպքում մասնակցում է հիմնախնդիրների լուծմանը, որոշումների ընդունմանը և հանձնարարականների կայացմանը:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի ազդեցություն կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքներին մասնակցության և որոշակի կազմակերպական գործառույթների իրականացման շրջանակներում:

### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

1) իր կառուցվածքային ստորաբաժանման ներսում շփվում է իր լիազորությունների շրջանակներում.

2) տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց հետ շփվում և հանդես է գալիս որպես ներկայացուցիչ իր լիազորությունների շրջանակներում.

3) տվյալ մարմնից դուրս շփվում է իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ.

4) տվյալ մարմնից դուրս որպես ներկայացուցիչ հանդես գալու լիազորություններ չունի.

### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

1) իր անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցում է խնդիրների վերլուծմանը և գնահատմանը.

2) բարդ խնդիրների բացահայտմանը, դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներին մասնակցելու լիազորություններ չունի

## **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության սերժանտի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

### ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

#### 1. Ընդհանուր դրույթներ

##### 1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.11-Գ-1)։

##### 1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Փրկարար ծառայության տնօրենին, փրկարար ծառայության տնօրենի տեղակալներին։

##### 1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները

Վարչության պետին անմիջականորեն ենթակա է Վարչության պետի տեղակալը։

##### 1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալը։

##### 1.5. Աշխատավայրը՝

Հայաստան, Արարատի մարզ, ք. Արտաշատ Օգոստոսի 23:

#### 2. Պաշտոնի բնութագիրը

##### 2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները Գործառույթները՝

1. Վարչության պետը պատասխանատու է Վարչության առջև դրված խնդիրների և Վարչությանը վերապահված գործառույթների իրականացման համար։

2. ղեկավարում է Վարչության ընթացիկ գործունեությունը։

3. իր լիազորությունների շրջանակներում տալիս է ցուցումներ և հանձնարարականներ։

4. պարբերաբար ներկայացնում է տեղեկատվություն՝ Տնօրենին և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին՝ Վարչության կողմից իրականացվող աշխատանքների ընթացքի մասին։

5. ներկայացնում է միջնորդություն Տնօրենին (Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին)՝ Վարչության ծառայողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ։

6. ապահովում է Նախարարի, Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հրամանների, ցուցումների, հանձնարարականների կատարումը և արդյունքների մասին զեկուցում այդ պաշտոնատար անձանց։

7. իր լիազորությունների շրջանակներում համագործակցում է պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ։

8. ընդունում է Վարչության ստորաբաժանումների գործունեության մասին հաշվետվությունները, քննարկում դրանց գործունեության արդյունքները։

9. իր լիազորությունների շրջանակներում և միջնորդությամբ լուծում է Վարչության անձնակազմի սոցիալական ապահովության հարցերը։

10. կազմակերպում է Վարչության ստորաբաժանումների գորհհամալրման գործընթացի իրականացումը։

11. մասնակցում է արտակարգ իրավիճակների կանխմանն ու հետևանքների վերացմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակմանը։

12. սահմանված կարգով մարզի համայնքներում ու կազմակերպություններում կազմակերպում և անց է կացնում ուսումնավարժություններ և վարժանքներ։

13. Տնօրենին, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալին ներկայացնում է առաջարկություններ՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման ուղղությամբ։

14. իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խորհրդակցությունների, դասընթացների, սեմինարների և հանդես է գալիս զեկույցներով։

15. մասնակցում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներին։



16. իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է Ծառայության համապատասխան ատեստավորման հանձնաժողովի աշխատանքներին.

17. իր լիազորությունների շրջանակներում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ.

18. ստորագրում է Վարչության անունից պատրաստվող բոլոր փաստաթղթերը.

19. իր լիազորությունների շրջանակներում հրավիրում է խորհրդակցություններ՝ սահմանված կարգով ներգրավելով Ծառայության համապատասխան ստորաբաժանումների մասնագետների.

20. իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) քննարկում և սահմանված կարգով ընթացք տալիս.

21. իր լիազորությունների շրջանակներում օգտագործում է Վարչությանը հատկացված շենքերը և շինությունները, կառույցները, ինչպես նաև այլ գույքը.

22. մարզում արտակարգ դեպքերի, պատահարների գրանցման դեպքում Վարչության առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման նպատակով ստեղծում է օպերատիվ խմբեր.

23. Նախարարի, Տնօրենի, Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

### **Իրավունքները՝**

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.

• փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.

- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:
- մշտապես վերահսկել կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների քանակական և որակական համալրվածությունը, հանդես գալ անձնակազմի որակական կազմի բարելավման առաջարկություններով.

14. վերահսկել անձնակազմի վերաբերյալ հրամանների, ղեկավար հրահանգների նախագծերի նախապատրաստման աշխատանքները.

### **Պարտականությունները՝**

• իր իրավասության սահմաններում վերահսկել մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման աշխատանքները և սահմանված կարգով ներկայացնել հաստատման.

• իր իրավասության սահմաններում հսկողություն իրականացնել մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրերի մշակման աշխատանքները.

• իր իրավասության սահմաններում ներկայացնել առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.

• իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն ցուցաբերել պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.

• իր իրավասության սահմաններում վերահսկել մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների

կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի կազմակերպումը, իրականացումը և համակարգումը.

- մարզպետին առաջարկություններ ներկայացնել քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլաններն ամբողջությամբ կամ մասամբ գործողության մեջ դնելու վերաբերյալ.

- իր իրավասության շրջանակներում կազմակերպել Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության՝ մարզի տարածքում տեղակայված ստորաբաժանումների ներգրավումը բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության միջոցառումներին՝ համաձայն փոխգործողությունների պլանների.

- վերահսկել որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.

- հսկել մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.

- ապահովել մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.

- վերահսկել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և պարբերաբար թարմացման ախատանքները.

- վերահսկել մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումն աշխատանքները.

- իր իրավասության շրջանակներում հաշվառել ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

- համակարգել մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

- վերահսկել խոցման օջախում հետախուզության իրականացման կազմակերպումը.

- քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումների իրականացման նպատակով մշակել և Տնօրենին ու մարզպետին ներկայացնել առաջարկություններ ֆինանսավորման հարցերի վերաբերյալ.

- հսկողություն իրականացնել հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների և փրկարարական կազմավորումների ատեստավորման աշխատանքների կազմակերպման և անցկացման նկատմամբ.

- վերահսկել պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումն աշխատանքների կազմակերպումը և իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

- իր իրավասության սահմաններում աշխատանքներ իրականացնել մարզի տարածքում փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների, կամավորական փրկարարական թիմերի ստեղծման ու պատրաստության ապահովման ուղղությամբ.

- արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք բերել հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

- հսկողություն իրականացնել քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակման աշխատանքների նկատմամբ.

- մասնակցել բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

- կազմակերպել Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

- մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող

կազմակերպությունների միջոցով վերահսկել մարզի բնակչության ազդարարման իրականացման աշխատանքները.

- կազմակերպել մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

- իր իրավասության սահմաններում արտակարգ իրավիճակների բնագավառում իրականացնել տարաժամկետ կանխատեսումներ.

- կազմակերպել մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

- իր իրավասության սահմաններում մասնակցել մարզի կառուցապատման գլխավոր հատակագծերի, նախագծերի առաջադրանքների մշակմանն ու դրանց եզրակացությունների կազմմանը՝ մարզի բնակչությանը պաշտպանական կառույցներով ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով.

- ռազմական դրության ժամանակ աշխատանքներ տանել մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

- իր իրավասության սահմաններում մասնակցել կազմակերպությունների անվտանգության վկայագրերի փորձաքննությանը.

- իր իրավասության սահմաններում իրականացնել պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

- տիրապետել և օգտագործել Վարչությանը հանձնված պետական գույքը.

- ապահովել Վարչության մասնակցությունը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման դիմակայմանը.

- Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.

- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.

- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.

- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.

- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### **3. Պաշտոնին ներկայացվող պահանջները**

#### **3.1. Կրթություն, որակավորման աստիճանը**

Բարձրագույն կրթություն

#### **3.2. Մասնագիտական գիտելիքները**

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

### **3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը**

Փրկարար ծառայության գլխավոր պաշտոնների խմբում կարող է նշանակվել այն անձը, ով վերջին երկու տարում զբաղեցրել է փրկարարական ծառայության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ավագ խմբի պաշտոն և ունեն փրկարար ծառայության մայրից ոչ ցածր կոչում կամ հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

### **3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ**

#### **Ընդհանրական կոմպետենցիաներ՝**

1. Աշխատակազմի կառավարում
2. Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
3. Որոշումների կայացում
4. Ծրագրերի կառավարում
5. Խնդրի լուծում
6. Բարեվարքություն

#### **Ընտրանքային կոմպետենցիաներ՝**

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Բողոքների բավարարում
4. Ժամանակի կառավարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

## **4. Կազմակերպական շրջանակը**

### **4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը**

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

### **4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները**

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման կազմում գործող կառուցվածքային միավորի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

### **4.3. Գործունեության ազդեցությունը**

Ունի տարածքային մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

### **4.4. Շփումները և ներկայացուցչությունը**

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը և մարմինը:

### **4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը**

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային միավորի գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ:

## **5. Փրկարար ծառայության կոչումները.**

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության գնդապետի կոչում:

Հավելված  
հաստատված է Ներքին գործերի նախարարի  
2023 թ. հուլիսի 13-ի N 17-Լ հրամանով

## **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ**

### **ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ**

#### **1. Ընդհանուր դրույթներ**

##### **1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը**

Փրկարար ծառայության Արարատի մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ (ծածկագիր՝ 27-2ՓԾ-25.11-Ա-1)։

##### **1.2. Ենթակա և հաշվետու է**

Վարչության պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է Վարչության պետին։

##### **1.3. Ենթակա և հաշվետու պաշտոնները**

Վարչության պետի տեղակալին անմիջականորեն ենթակա են Վարչության ծառայողները։

##### **1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները**

Վարչության պետի տեղակալի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի պետը կամ բնակչության պաշտպանության բաժնի պետը։

##### **1.5. Աշխատավայրը՝**

Հայաստան, Արարատի մարզ, ք. Արտաշատ Օգոստոսի 23

#### **2. Պաշտոնի բնութագիրը**

##### **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները Գործառույթները՝**

1. իր լիազորության սահմաններում համակարգում է Վարչության ստորաբաժանումների աշխատանքները։

2. Վարչության խնդիրներին և գործառույթներին համապատասխան՝ վարչության ներքին կառուցվածքային ստորաբաժանումներին տալիս է ցուցումներ ու հանձնարարականներ, սահմանում է հսկողություն կատարման նկատմամբ։

3. կազմակերպում է Վարչության պետի մոտ քննարկվելիք հարցերի նախնական քննարկումներ։

4. իր լիազորության սահմաններում համագործակցում է Ծառայության այլ ստորաբաժանումների, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ։

5. իր լիազորության սահմաններում իրականացնում է Նախարարի, Տնօրենի, վարչության գործունեությունը համակարգող տնօրենի տեղակալի և Վարչության պետի հրամանների ու հանձնարարականների կատարման նկատմամբ հսկողություն։

6. Վարչության պետին ներկայացնում է առաջարկություններ՝ Վարչության ստորաբաժանումների առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման ուղղությամբ։

7. պարբերաբար Վարչության պետին է ներկայացնում տեղեկատվություն իրեն հանձնարարված բնագավառներում տիրող իրավիճակի մասին։

8. ներկայացնում է առաջարկություններ Վարչության պետին՝ Վարչության աշխատողների նկատմամբ խրախուսանքի կամ կարգապահական տույժի միջոցներ կիրառելու վերաբերյալ։

9. իր լիազորությունների շրջանակներում մասնակցում է խորհրդակցությունների, դասընթացների, սեմինարների, հանդես է գալիս զեկույցներով

10. իր լիազորությունների շրջանակներում կազմակերպում և վերահսկում է ենթակա ստորաբաժանումների (հրշեջ-փրկարարական ջոկատներ) մարտական պատրաստության անցկացումը։

11. իր իրավասության սահմաններում հսկողություն է իրականացնում հրշեջ-փրկարարական ջոկատների գործունեության ուղղությամբ։

12. մասնակցում է փրկարարական ծառայողների ծառայողական պատրաստության պարապմունքներին։

13. իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է քաղաքացիների նամակների (առաջարկությունների, դիմումների և բողոքների) քննարկում և ներկայացնում առաջարկություն վարչության պետին։

14. մասնակցում է մարզում, համայնքներում, կազմակերպություններում անցկացվող ուսումնալարժությունների նախապատրաստման և անցկացման միջոցառումներին։

15. Վարչության պետի հանձնարարությամբ իրականացնում է օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

### **Իրավունքները՝**

- զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին ծանոթանալը.
- իր անձնական գործի նյութերին, իր գործունեության գնահատականներին և ծառայողական գործունեության վերաբերյալ այլ փաստաթղթերին ծանոթանալը և բացատրություններ տալը.
- ծառայողական պարտականությունների կատարման համար սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր ստանալը.
- մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին մասնակցելը.
- աշխատանքի համար համարժեք վարձատրություն ստանալը.
- իրավական պաշտպանությունը:
- առողջության պահպանումը.
- փրկարար ծառայության պաշտոնի և կոչումի՝ սահմանված կարգով բարձրացումը.
- նշանակման արդյունքները բողոքարկելը.
- արտակարգ իրավիճակի վայրում բնակելի և արտադրական տարածքներ ու կազմակերպություններ մուտք գործելը.
- մարդկանց փրկության և ծայրահեղ անհրաժեշտության դեպքերում կապի, տրանսպորտի և այլ նյութական միջոցներ օգտագործելը:

### **Պարտականությունները՝**

- իր իրավասության սահմաններում ապահովել մարզի տարածքում արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառներին առնչվող մարզպետի համապատասխան որոշման նախագծերի մշակման աշխատանքները իրականացումը.
- իր իրավասության սահմաններում կազմակերպել մարզի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման, արտակարգ

իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններ, ծրագրերի մշակման աշխատանքները.

- իր իրավասության սահմաններում ներկայացնել առաջարկություններ բնագավառին առնչվող օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ.
- իր իրավասության սահմաններում մեթոդական օգնություն ցուցաբերել պետական կառավարման մարմինների տարածքային, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներին և տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին՝ նրանց կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ ծրագրերի մշակման գործում.
- իր իրավասության սահմաններում ապահովել մարզպետարանի և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների կողմից արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման ուղղությամբ մշակված ծրագրերի կազմակերպման, իրականացման և համակարգման աշխատանքները.
- ապահովել որոնողափրկարարական, փրկարարական, հրդեհաշիջման, վթարային փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը.
- իր իրավասությունների շրջանակում ապահովել մարզի տարածքում վտանգավոր բեռների տեղափոխումը, ապահովում շահագրգիռ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ծառայությունների իրազեկումը.
- ապահովել մարզում ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման և վերլուծության աշխատանքները.
- կազմակերպել արտակարգ իրավիճակներ առաջացնող երևույթների վերաբերյալ տվյալների բազայի ստեղծման և պարբերաբար թարմացման ախատանքները.
- իր իրավասությունների շրջանակում ապահովել մարզի տարածքում գրանցված արտակարգ դեպքերի, պատահարների հաշվառումն աշխատանքների կատարումը.
- իր իրավասության շրջանակներում հաշվառել ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փրկարարական, հրդեհաշիջման և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներում ներգրավել տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների

հակահրդեհային ծառայությունների արտագնա հակահրդեհային տեխնիկան.

- իր իրավասությունների շրջանակում կազմակերպել մարզում առկա փրկարար ուժերի, քաղաքացիական պաշտպանության կազմավորումների և հրշեջ ստորաբաժանումների գործունեությունը.

- կազմակերպել խոցման օջախում հետախուզության իրականացումը.

- ապահովել հրշեջ-փրկարարական ստորաբաժանումների և փրկարարական կազմավորումների ատեստավորման աշխատանքների կազմակերպումը և անցկացումը.

- կազմակերպել պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և բնակչության ուսուցումն աշխատանքների իրականացումը՝ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանությանն առնչվող հիմնահարցերով.

- արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների նվազեցման միջոցառումների ապահովման նպատակով, սահմանված կարգով, ձեռք բերել հավաստի տեղեկատվություն պետական կառավարման տարածքային ու տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից.

- կազմակերպել քաղաքացիական պաշտպանության հարցերով զորահավաքային ծրագրերի և պլանների մշակման աշխատանքները.

- մասնակցել բնակչության կենտրոնացված ազդարարման համակարգի կատարելագործմանը և արդիականացմանը.

- իրականացնել Վարչության անձնակազմի, պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների, մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, շահագրգիռ կազմակերպությունների ղեկավար կազմի ազդարարումը.

- մարզի տարածքում գործող կենտրոնացված ազդարարման համակարգի և կապի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների միջոցով կազմակերպել մարզի բնակչության ազդարարման իրականացման աշխատանքները.

- իրականացնել մարզում արտակարգ իրավիճակների ծագման կամ սպառնալիքի վերաբերյալ ահազանգերի ու տեղեկատվության ընդունումը, վերլուծումը, ամփոփումն ու տեղեկատվության սահմանված կարգով փոխանցումը.

- իրականացնել մարզի տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծություն և վիճակագրության վարում.

- ռազմական դրության ժամանակ իր իրավասության սահմաններում աշխատանքներ տանել մարզային զինկոմիսարիատի հետ Վարչության գործելու և զորահավաքային պատրաստականության խնդիրների համաձայնեցման ուղղությամբ.

- իր իրավասության սահմաններում իրականացնել պետական և ծառայողական գաղտնիքի պահպանմանն ուղղված գործունեություն.

- տիրապետել և օգտագործել Վարչությանը հանձնված պետական գույքը.

- կազմակերպել Վարչության մասնակցությունը Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման դիմակայմանը.

- Նախարարի, Տնօրենի և Տնօրենի՝ Վարչության գործունեությունը համակարգող տեղակալի հանձնարարությամբ իրականացնում է այլ գործառույթներ.

- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

- կատարել Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները.

- ծանոթանալ զբաղեցրած պաշտոնում իր լիազորությունները սահմանող իրավական ակտերին.

- հետևել հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներին և դրանից բխող վարքագծի կանոններին, անհամատեղելիության պահանջներին, այլ սահմանափակումներին և շահերի բախմանն առնչվող կարգավորումներին.

- ճշգրիտ ու ժամանակին կատարել օրենսդրությամբ իրեն վերապահված պարտականությունները և հաշվետվությունները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ ներկայացնելը հայտարարագիր.

- կատարել վերադաս մարմինների և պաշտոնատար անձանց՝ սահմանված կարգով տված հանձնարարականները և ընդունած որոշումները.

- պահպանել օրենսդրությամբ սահմանված աշխատանքային կարգապահական ներքին կանոնները.

- մասնակցել մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների բարելավման համար վերապատրաստումներին:

- ապահովել մասնագիտական և ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անհրաժեշտ գիտելիքներ.
- սահմանված կարգով և ժամկետներում քննության առնել առաջարկություններ, դիմումներ ու բողոքներ և դրանց ընթացք տալ.
- աշխատել պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ, պահպանել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.
- իրենց պարտականությունների կատարման համար ստանալ անհրաժեշտ լրիվ և հավաստի տեղեկատվություն.
- պահանջել պահպանել անվտանգության կանոնները արտակարգ իրավիճակի վայրում գտնվող բոլոր անձանցից.
- արտակարգ իրավիճակների բնագավառը կարգավորող իրավական ակտերով և Ծառայության կանոնադրությամբ սահմանված խնդիրների ու գործառույթների ապահովման նպատակով իրականացնել այլ աշխատանքներ:

### 3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

#### 3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

#### 3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

#### 3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքային բնագավառում փորձը

Փրկարար ծառայության ավագ և միջին խմբերի պաշտոններում ծառայողների առաջխաղացումը կատարվում է տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո.

#### 3.4. Անհրաժեշտ Կոմպետենցիաներ

##### Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

##### Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Ժամանակի կառավարում
4. Փաստաթղթերի նախապատրաստում

### 4. Կազմակերպական շրջանակը

#### 4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

#### 4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված՝ մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում իրավունքների տրամադրման և դիմումների քննարկման շրջանակներում

#### 4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման համար մասնագիտական գործունեության գերատեսչական ազդեցություն:

#### 4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

#### 4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը:

### 5. Փրկարար ծառայության կոչումները.

Փրկարար ծառայողին օրենքով սահմանված կարգով շնորհվում է փրկարարական ծառայության փոխազնդապետի կոչում:



